



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՏՈՐ Ծ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 13, 1897

ԹԻ 11

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: Title and Page Number. Includes items like 'Երկինքն Աւ Հաշիւի Աւ', 'Միայն Քրիստոս', etc.

ԱԻՆՏԱԲԵՐ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ. Կը հրատարակուի ամէն շաբաթ օր:

Տարեկան գինն է ամէն տեղոյ համար կանխիկ 1 1/2 մեհիսիյէ, վեցամսեայն՝ 3/4 մեհիսիյէ:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու կողմանէ, ձ. Ք. ԿՐԻՆ, ԱՐՏՕՆՏԻՐ

Հ. Ս. ՊԱՐՆԸՄ, ՏԵՐԵՆ-ՄԱՐԱԳԻՐ

«ԵՐԿԻՆՔՆ ԱՎ ՀԱՇԻՒԻ ԱՎ»

Երկինքով կը բացատրուին շատ բաներ որ երկրի վրայ անբացատրելի են:

Չմտն ցուրտ և փոթորկալի օր մը ծերունի քրիստոնեայ մը կանգ առաւ հանդիման համար իր ծանր բեռնէն:

րածուած է ահա: Իր աչքերը պարարտութենէն դուրս կ'ելլեն: Ուրիշ մարդոց հետ չտանջուիր, մինչ դուն հաւատալով հանդերձ թէ բոլոր ոսկին ու արծաթը Տէրոջն են, ծառայելով և ապահանջելով հանդերձ անոր Նախախնամութեան, կ'աշխատիս և քրտինք կը թափես ծեր հասակիդ մէջ և հացէդ ու ջուրէդ քիչ աւելի բան կը ստանաս:

Քրիստոնեան դանձեր ունի երկնից մէջ գիշտած: Հոգևոր առատ հարստութիւն ունի հոս իր սրտին մէջ, բայց ժառանգ է միլիոններու որ երկնից մէջ են և բոլորովին զերծ կորսուելու վտանգէն:

ՄԻՍՅՆ ՔՐԻՍՏՈՍ (Պատ. Ուիլքըճ Էրլըն)

Հաւատալով, դիտնալով և գործադրելով ամէն բան, Աստուծոյ և մարդու վերաբերող ամէն բան, ուրիշ աշխարհներու և ուրիշ էակներու նկատմամբ ամենադոյզն կարեւորութիւն ունեցող ամէն բան, անցեալ ժամանակներու ամբողջ պատմութիւնը, բովանդակ ապագային ամէն յոյսը և ակնկալութիւնը, ամէն բան զոր երբեք կարող ենք գիտնալ յաւիտենական հատուցումներու վրայով, ամէն արուեստներ, գիտութիւններ, գիւտեր, հնարումներ և մեծագործութիւններ, պատերազմներ և կառավարութիւններ, վերաբերութիւն ունին անոր որուն համար ստեղծուեցան բոլոր բաները և որով հաստատ կը կենայ ամէն բան: Երբ Տարոնացի ուսումնական նորահաւատը որոշեց «ուրիշ բան մը չգիտնալ, բայց միայն Յիսուս Քրիստոսը, ու ան խաչը եղած», չփակեց ինքզինք ստորին և նեղ շրջանակի մը մէջ, այլ դրաւ բուն իսկ լուսոյ վառարանին կամ կեդրոնին մէջ, ուր կարող եղաւ ամէն շառաւիղի տիրանալ ծանօթութեան անեղր անհունութեան մէջ:

Կը տեսնենք ուրեմն թէ Պողոս, որոշելով «ուրիշ բան մը չգիտնալ, բայց միայն Յիսուս Քրիստոսը», չեղաւ մասնագետ, այլ ուսանող մը ամէն բանի որ ամենէն վտեմ ու լաւն է տիեզերքին մէջ: Այս իրողութիւնը լուսաբանելու համար, թէև հարկաւ շատ աղօտ և տկար կերպով, երևակայենք դիտուն մը որ ահագեմիտ ժողովին մէջ կեցած կ'ըսէ. «Ընկերակիցներս, ես որոշած եմ այսուհետև թնութեան ուսումնասիրութիւններու մէջ ուրիշ բան մը չգիտնալ, բայց միայն Արևը»: Պիտի չդռնէն անոնք, «Անպատճառ արևէն զարնուած և խենդեցած է»: Սակայն քանի մը օրէն արևու այս երկրպագուն կը գտնեն սենեակին մէջ նստած և ամէն ձևով և գոյնով ծաղիկներով շրջապատուած, զորս կը տարբարածէ և կը դասաւորէ: Այցելուները կ'ըսեն, «Արևաբանութիւն չէ այդ, բուսաբանութիւն է»: «Ոչ», կը պատասխանէ նա, «պարտէզի, արտի և անտառի բոլոր բուսականութիւնը և փառքը արևէն են: Չայն կ'ուսումնասիրեմ ես իր գործերուն մէջ»: Դարձեալ զբաղած կը գտնեն զայն խոտերու, ընդեղէններու և պտուղներու հաւաքածոյի մը մէջտեղ: Այդ բոլոր բաներն անոր ընտրած ճիւղին կը վերաբերին նոյնչափ որչափ արեգակնային լուսապատկերը:

Բայց մէկ գաղափարի ծառայող դիտունը կը գտնուի աշխարհայոց քարտէսներով պաշարուած և այլևայլ երկիրներու տեսարանները և բնակիչները նկարագրող գիրքերու մէջտեղ: Կը կարծուի թէ ահա վերջապէս կը շեղի իր նախասիրական մասնագիտութենէն: Սակայն եղած քննադատութիւններուն կը պատասխանէ. «Արևը, որուն երկրպագուն եմ ես, ամէն օր կ'այցելէ այս երկիրներէն իւրաքանչիւրը և իր ներկայութեամբ կը զուարթացնէ զանոնք: Եթէ ան այդքան խորապէս կը շահագրգռուի անոնցմով, ինչո՞ւ ես ալ չչահագրգռուիմ»: Այդպէս կ'իմանան թէ բնական գիտութեան մէջ արևաբանութիւնը ճիւղ մը չէ, այլ կը բովանդակէ



ամէն մասնաճիւղ: Նոյն իսկ հանքա-  
ծուխը զոր հանքերէն կը հանենք պե-  
ղելով՝ մեզի կը պատմէ այն զօրութիւնը  
զոր արեւուն լոյսը երկրի վրայ բանեցու-  
ցած է միլիոնաւոր դարեր առաջ:

Արդ, որովհետեւ ֆրիստոս է արդա-  
րութեան Արեգակը, որովհետեւ անով  
ստեղծուեցան բոլոր բաները և անով  
հաստատ կը կենայ ամէն բան, որով-  
հետեւ ան է Ալֆա և Օմեգա, Առաջինը  
և վերջինը, որովհետեւ ան է մարդոց  
Ստեղծիչը, Փրկիչը և Դատաւորը, ան-  
շուշտ ոչ միայն կեդրոնը այլ և շրջա-  
պատնէն է ամէն ծանօթութեան: Ան է  
ամէնը ամէն բանի մէջ:

ՅԵՍՈՒՍԵ ՔՐԻՍՏ  
[Խմբագրական]  
9.

Երբ իւրաքանչիւր ցեղ իր բաժինն ստա-  
ցաւ, Տէրը Յեսուսի պատուիրեց ապաստանի  
վեց քաղաք որոշել Մովսեսի ձեռքով տրուած  
պատուէրին համաձայն (Թու. Լե. 6, Բ Օր.  
Ժ. 2): Որոշուած քաղաքներն իրարմէ  
գրեթէ հաւասարապէս հեռու էին: Դիւրին  
էր այդ քաղաքներն հասնիլ երկրին ամէն  
կողմերէն, քանզի երեքը Յորդանանու ա-  
րեւմտեան կողմն էին, երեքն ալ արեւելեան  
կողմը: Արեւմտեան ապաստանի քաղաք-  
ներն էին Կաղէս հիւսիսակողմը՝ Նեփթա-  
ղիմի բաժնին մէջ, Սիւքէմ, արդի Նապոլուս  
քաղաքը, կեդրոնական մասին մէջ և Բե-  
րոն հարաւակողմը: Ասոնցմէ վերջին եր-  
կուքը տակաւին հանրածանօթ քաղաքներ  
են, մինչ Կաղէսի տեղն հաւանօրէն գտնուած  
է այժմու Բէտիս աւանին մէջ: Հրէական  
աւանդութիւն մը կայ թէ հող կը գտնուին  
Դերօրայի, Բարակի, Յայելի և Քաբերի  
գերեզմանները (Դատ. Դ.): Յորդանանու  
արեւելեան կողմը Մովսեսի ձեռքով տրուած  
երեք քաղաքներուն անուանումը (Բ Օր. Դ.  
41-43) վերահաստատուեցաւ: Այս երեք քա-  
ղաքներէն Բոսոր հարաւակողմն էր, Ռա-  
մովթ կեդրոնը, և Գովղան հիւսիսակողմը:  
Ասոնցմէ Ռամովթ Յորդանանու արեւելեան  
կողմի մեծ ամրութիւններէն մին էր, քա-  
նիցս կը յիշուի Իսրայելի մնացեալ պատմու-  
թեան մէջ և հաւանօրէն նոյն է այժմու  
էս Սովթ անուն աւանին հետ: Բոսորի և  
Գովղանի ճիշդ տեղերն անձանօթ են: Ա-  
պաստանի քաղաքներու հաստատումը ո-  
ղորմութեան տնօրինութիւն մ'էր: Հին ա-  
տենները արդարութիւնը կը գործադրուէր  
սպաննուածին ամենէն մօտ ազգականնե-  
րուն ձեռամբ, և օրէնքը խորի չէր դնել  
կանխամտածութեամբ գործուած սպանու-  
թեան և զիպուածաւ գործուած սպանու-  
թեան միջեւ, ոչ ալ կը տրամադրէր հարցա-  
քննել կասկածի ենթարկուած անձը: Կը մի-  
տէր նաեւ մշտնջենաւորել արիւնհեղու-  
թիւնը, վասն զի արեան վրիժառուն իր  
սպաննած մարդուն ազգականներուն ձե-  
ռամբ սպաննուելու ենթակայ էր: Ապաս-  
տանի քաղաքները Յունաց և Հռոմայեցոց  
մէջ տիրող սովորութեան մը չարիքէն ալ  
զերծ էին: Այդ ազգերն ապաստանի տեղեր  
ուէէին ուր ամէն կարգի ոճրագործներ  
կրնային ապաստանիլ: Կերեւի թէ մար-  
դասպանը նախնական քննութիւն մը կը կրէր  
քաղաքին ձեռքերէն և ապա ուրիշ մը ամբողջ  
ժողովքին ներկայութեամբ: Եւ զիտմամբ

սպանութիւն գործած չլլալու վճիռն ստա-  
նալէն իսկ ետեւ մարդասպանը պարտաւոր  
էր ապաստանի քաղաքին մէջ մնալ մինչեւ  
որ մեռնէր քահանայապետը որ, Աստուած-  
պետական իշխանութեան իրրեւ գլուխ,  
ներկայացուցիչն էր ուխտին: Ուխտն իբր  
թէ իւրաքանչիւր նոր քահանայապետի  
պաշտօն ստանձնելուն առթիւ կը վերանո-  
րոգուէր: Թերեւս նաեւ կար այլաբանական  
ակնարկութիւն մը Քրիստոսի, մեր մեծ  
Քահանայապետին, մահուան արդարացուցիչ  
ազգեցութեան: Պէտք է զիտել թէ այս կար-  
գադրութեամբ աղքատը հարուստին հաւա-  
թար կը բռնուէր, վասն զի սպանութեան  
համար դրամական հատուցում չէր պա-  
հանջուէր: Ռարբիները կ'ըսեն թէ ապաս-  
տանի քաղաքներուն ձեռքները միշտ կը նո-  
րոգուէին և լաւ վիճակի մէջ կը պահուէին  
և ամէն խոչըր և արգելքներ կը վերցուէին:  
Երբ միւս ցեղերն իրենց ժառանգութիւնն  
ստացան, ալ կարելի եղաւ անոնց մէջ ցու-  
ցնել Ղեւտացիներուն վիճակը: Որովհետեւ  
Ղեւտացիները ժողովրդին կրօնական հա-  
ւատքին ներկայացուցիչներն էին, անհրա-  
ժեշտ էր որ բաժնուէին ամբողջ ժողովրդին  
մէջ: Բայց որովհետեւ իրենց կրօնական  
ազգեցութիւնը պիտի տկարանար եթէ շատ  
ցիրուցան ըլլային, 48 քաղաքներու մէջ  
խմբուեցան: Չափազանց մեծ բաժին չէր  
այս, վասն զի երկրորդ մարդահամարէն  
կը տեսնուի թէ արու Ղեւտացիներուն  
թիւը 23,000 էր և Ղեւտական ցեղը հող  
չունէր: Կարելի է նաեւ թէ այդ քաղաք-  
ներէն ոմանց երեքը չտիրացան Ղեւտացիք,  
և թէ այդ մասին իրենք անիրաւութիւն  
կրեցին ինչպէս կրեցին տասանորդի խնդրոյն  
մէջ (Մաղ. Գ. 8-10): Դարձեալ, Ղեւտական  
այդ քաղաքները ամբողջովին և մի միայն  
Ղեւտացիներուն չէին պատկաներ, այլ կ'ե-  
րեւի թէ սեփականութիւնն էին այն ցե-  
ղերուն որոնց հողին կամ բաժնին մէջ  
կը գտնուէին: Իսկ Ղեւտացիները աէր էին  
միայն այն տուններուն որոնց մէջ կը նստէին,  
և քաղաքականապէս նոյն էին այն ցեղե-  
րուն հետ որոնց մէջ կը բնակէին: Ա. Մնաց.  
Զ. 34-81 համարներուն մէջ կը տրուի Ղեւ-  
տական քաղաքներու ցանկ մը, որուն մէջ  
42 քաղաք միայն կը յիշուին, և յիշուած  
անուններէն ոմանք տարբեր են թերեւս  
անոր համար որ փոխուած էին, կամ քա-  
ղաք մը ուրիշի մը տեղ անցած էր: Քահա-  
նաններուն տասներեք քաղաք յատկացուե-  
ցաւ, և իրենց վիճակն ելաւ Յուդայի,  
Շմաւոնի և Բենիամինի բաժիններուն մէջ:  
Որովհետեւ Երուսաղէմ ազգին կրօնական  
կեդրոնը պիտի ըլլար, այդ քաղաքին մօ-  
տակայ վիճակներուն մէջ քահանաներուն  
բաժին յատկացնելը կարծես թէ մարգա-  
րէական նշանակութիւն ունի: Միւս կա-  
հաթեանք տասը քաղաք առին Եփրեմի,  
Դանի և Մանասէի բաժիններուն մէջ,  
որոնք սահմանակից էին քահանաներուն  
բնակութեան յատկացուած վիճակներուն:  
Միւս ցեղերուն մէջ 13 քաղաք յատկացուե-  
ցաւ Գերսոնի որդւոց և 12 քաղաք Մերա-  
րիի որդւոց: Յերոբոամի օրով տասը ցե-  
ղերուն ապստամբէն ետեւ Ղեւտացիք  
մեկնեցան իրենց քաղաքներէն և գացին  
Յուդայի բաժինը (Բ Մնաց. ԺԱ. 13, 14):  
Երկուքուկէս ցեղերուն պատերազմական-  
ները չվերադարձան իրենց վիճակը որ Յոր-  
դանանու արեւելեան կողմն էր՝ մինչեւ որ  
Ղեւտական քաղաքները որոշուեցան, քանզի  
այդ գործին մէջ իրենք ալ շահ ունէին:

Խնդրոյն կարգադրութենէն ետեւ Յեսու-  
սի իրենց տեղերը զրկեց զանոնք, յոյժ շատ  
զովելով անոնց հաւատարմութիւնը նկատ-  
մամբ իրենց եղբայրներուն և իր օրհնու-  
թիւնը տալով անոնց: Յորդորեց նաեւ սի-  
րել զԱստուած և պահել անոր պատուի-  
րանները, յորդոր մը՝ որ մասնաւոր յարմա-  
րութիւն ունէր, վասն զի իրենց առանձնու-  
թեան մէջ մեծ վտանգ կար որ մոռնային  
զԱյն որուն կը պարտէին իրենց յաջողու-  
թիւնը: Ունայն ձեռքով չվերադարձան ա-  
նոնք, այլ՝ աւարով ծանրաբեռնեալ, և  
հրամայուեցաւ աւարը բաժնել իրենց այն  
եղբայրներուն հետ որ Յորդանանու արեւ-  
ւելակողմը մնացած էին: Երբ հասան Յոր-  
դանանու եզրը, զետէն չանցած, մեծ սե-  
ղան մը կանգնեցին երեւելի տեղ մը, այն-  
պէս որ չէր կրնար հեռուէն աչքի չզարնել:  
Կը կարծուի թէ այս սեղանին տեղը վերջերս  
գտնուեցաւ: Լեռան մը վրայ, որուն կա-  
տարը գրեթէ անմատչելի է բայց ի հիւսիսա-  
կողմէն, և որ Երիքովէ՝ 30 հազարամետր  
հեռու է դէպ հիւսիս և Սելովէ Գաղաադ  
երթալու ճամբուն շատ մօտ, որմադրական  
անագին յիշատակարանի մը մնացորդները  
կը գտնուին: Երբ միւս ցեղերու մարդիկը  
լսեցին եղածը, ժողովուեցան որ պատերազ-  
մին անոնց հետ: Իրենք բնաջինջ ըրած էին  
Քահանայները անոնց կռապաշտութեան  
համար: Հիմա պատրաստ էին իրենց եղ-  
բայրներն ալ սպաննել եթէ նոյն յանցանքը  
կը գործէին: Եթէ սեղանը ուրիշ աստուած-  
ներ պաշտելու համար կանգնուած էր,  
պիտի սպաննուէին անոնք: Եթէ մինչև իսկ  
Տէր Աստուածը պաշտելու համար էր,  
վտանգ կար որ խզուէր այն միութեան  
կապը, զոր պահպանելու համար կարեւոր  
էր որ ամէնքը նոյն տեղը դային և երկրպա-  
գէին, ինչպէս իրենց պատուիրուած էր ընել  
տարին երեք անգամ: Սակայն Իսրայելի  
որդիները աճապարանքով պիտի չզործէին:  
Նախ քահանայապետական ժառանգ Փենեհէս  
քահանային առաջնորդութեամբ պատուիրա-  
կութիւն մը զրկեցին տասն իշխանէ բաղ-  
կացեալ, որոնց իւրաքանչիւրը փորձառու  
մարդ էր և մէյմէկ ցեղէ անուանած: Այս  
եռանդուն քահանան մեծ ազգեցութեան տէր  
էր անտարակոյս (Թու. Իե. 7, 10-13, Թու.  
ԼԱ. 6, Դատ. Ի. 28, Սաղ. ճԶ. 30, 31):  
Իր յիշատակը տակաւին յարգելի է Հրէից,  
որոնցմէ բազմութիւններ կը զիմեն անոր  
գերեզմանը, որ Նապոլուսէ չորս մղոն հե-  
ռու է: Փենեհէս երկուքուկէս ցեղին մար-  
դոց յիշեցուց Փոզովրի անօրէնութիւնը և  
անոր հետեւանքները, նաեւ Աքարի մեղքը:  
Վեհանձնութեամբ առաջարկեց ընդունիլ զի-  
րենք Յորդանանու արեւմտեան կողմը, և  
վերստին բաժնել երկիրը: Սակայն անոնք  
ուրացան թէ ոեւէ զիտաւորութիւն ունին  
սեղանին վրայ ողջակէզ կամ զոհ մատուցա-  
նելու: Եինած չէին զայն իբրեւ բաժանման  
միջոց մը, այլ մանաւանդ իբրեւ վկայ մը  
թէ իրենք Իսրայելի կը վերաբերին և իրենց  
եղբայրներուն հետ իրաւունք ունին Եհո-  
վային ժողովրդեան յատուկ օրհնութիւննե-  
րուն մասնակից ըլլալու: Այս բացատրու-  
թիւնն ընդունուեցաւ նոյն անկեղծութեամբ  
որով տրուեցաւ, և իշխաններն ու անոնց  
միջոցաւ ներկայացուած ցեղերը լիովին գոհ  
մնացին:

Երբ երկիրը բաժնելու գործը լնացաւ  
Յեսուս չիշխեց իբրեւ դատաւոր, այլ հան-  
րային կեանքէ քաղաքացաւ առանձնացաւ:  
Կիբէ կ'ըսէ թէ այդ առանձնացումը ալ-



գային անկման կամ տկարացման սկիզբն եղաւ : Ծերունի առաջնորդը ցորչափ ապրեցաւ : ամէն պատեհութեամբ ժողովրդին մտայ վրայ տպաւորեց իրենց պարտականութիւնն առ Աստուած : Ասոր երկու օրինակները կը տեսնենք Յեսուայ երկու ուղերձներուն մէջ որ կը գտնուին ԻԳ. եւ ԻԴ. գլուխներուն մէջ : «Այդ ուղերձներէն երկուքին ալ ունկնդիրները եթէ ոչ ամբողջովին, գէթ մեծ մասամբ,» կ'ըսէ անօրէն Տըկլըս, «նոյն կը թուին, այսինքն ամբողջ Իսրայէլ, որուն ներկայացուցիչն էին ծերերը :» Ուրիշներ կը կարծեն թէ առաջին ուղերձը խօսուեցաւ ծերերուն, եւ երկրորդը՝ հաւաքուած ցեղերուն : Առաջինին տեղը չէ յիշուած : Թերեւս Սելով էր, կամ բուն իսկ Յեսուայ տունն ի Թամնաթսարա : Առաջին ուղերձով դիմում բրաւ այն փորձառութեան զոր ստացած էին Աստուծոյ ողորմութեան նկատմամբ : Պատուիրեց անոնց ուժով եւ քաջասիրտ ըլլալ, բայց հեռանալ անիծուած ազգերէն եւ անոնց աստուածներէն, ազգարարելով թէ, եթէ Տէրոյմէ ապստամբին, խստիւ պիտի պատժուին : Երկրորդ ուղերձով սկսաւ Աբրահամու կոչումէն եւ իրենց յիշեցուց նաեւ Եգիպտոսէ ազատումը, Յորդանանու արեւելեան կողմը Ամօրհացուց պարտութիւնը, Բաղամի չար նպատակներուն ի դերեւ հանուիրը, Իսրայէլի Յորդանանէ անցնիլը եւ Քանանու նուաճումը : Յետու հիմնաւոր կասկածներ ունէր թէ կռապաշտութեան խմորը արդէն իսկ կը գործէր ժողովրդին մէջ, ուստի հրաւէր կարդաց մերժել օտար աստուածները : Ինչպէս Եղիա կարմեղոս լեռան վրայ ըրաւ (Գ Թագ. Ը. 21), նոյնպէս Յեսու ժողովրդին հրաւէր կ'ուղղէ ընտրել թէ զո՞վ պիտի պաշտեն իրեն Աստուած, բայց կ'իմացնէ թէ իրենց ընտրութիւնն ինչ ալ ըլլայ, ինք եւ իր տունը Եհովան պիտի պաշտեն : Ժողովուրդը կը խոստանայ Եհովան պաշտել այն բաներուն համար զորս իրենց ըրած էր, եւ իրենց խոստման վրայ կը մնան թէ եւ Յեսու իրենց կը պարզէ անհաւատարմութեան ահաւոր հետեւանքները : Այսպէս հրապարակաւ կը նորոգուի ուխտը : Յետու անոր պատմութիւնը կը գրէ եւ կը զնէ Օրինաց գրքին մէջ : Նաեւ քար մը կը կանգնէ իրեն վրայ նուիրական բեւեկներին տակը զոր դարեր առաջ Աբրահամ նուիրագործած էր այդ երկրէն անցնելու պահուն : Այս ազգու հրապարակախօսութեամբ, յորում ծերունի հրամանատարը բնաւ չյիշեց իր ծառայութիւններն առ ազգն, կամ անոնց զինուորական աշխարհակալութիւնները, այլ միայն Եհովային ընտրեալ ժողովրդին վայրով սրբութիւնը եւ հնազանդութիւնը, վերջացաւ Յեսուայ գործը եւ ուրիշ ընկերը չմնաց իրեն, բայց եթէ մեռնի :

Յետու մեռաւ 110 տարեկան, այսինքն Իսրայէլի Յորդանան գետէն անցնելէն իր 23 տարի ետքը : Ոմանք կը կարծեն թէ անոր գերեզմանը տակաւին կը տեսնուի Թիպնէի մէջ : Այդ տեղւոյն գերեզմաններուն մէջ կայ մէկը որ երեւելի է, եւ «անտարակոյս այդ երկրին ամենէն ուշագրաւ յիշատակարանն է :» Եօթանասնից թարգմանութիւնը կ'ըսէ թէ ժողովրդին թլիստաման համար գործածուածներուն նման գալաթազէ դանակներ թաղուեցան Յեսուի քով : Ահա այդպիսի դանակներ գտնուեցան երբ բացուեցաւ յիշեալ գերեզմանը : Սակայն շատեր կը տարակուսին թէ այդ է Յեսուայ գերեզմանը : Յետոյ մահը վերջ չտուաւ

Յեսուայ օգտակարութեան, վասն զի ցորչափ ապրեցան ոմանք այն ծերերէն որ ընկերացած էին անոր՝ ժողովուրդը Տէրոյմը հաւատարիմ մնաց : Յովսեփի ոսկրներուն թաղումը, թէ եւ հոս պատմուած է, հաւանօրէն քանի մը տարի առաջ տեղի ունեցաւ : Գիրքը կը վերջանայ Եղիազար քահանայապետին մահուան յիշատակութեամբ, թէ եւ այդ մահն ալ կրնայ տեղի ունեցած ըլլալ Յեսուի ողջութեան ժամանակ :

Վ. Ե. Բ. Ե.

ԲԱՐԻՔ ԸՆԵԼ

Հազարաւոր մարդիկ կը շնչեն, կը շարժին եւ կ'ապրին, կեանքի թատերաբեմէն կը մեկնին եւ այլ եւս չեն յիշուիր : Ինչո՞ւ, Բարիք մը չըրին աշխարհի մէջ, մէկը չօգտուեցաւ իրենցմէ, մէկու մը փրկութեան միջոց չկրցան ըլլալ : Իրենց գրած ոչ մէկ տողը, խօսած ոչ մէկ խօսքը, կրցաւ յիշատակել ըլլալ, եւ ուստի իրենք կորսուեցան, այսինքն իրենց լոյսը մարեցաւ խաւարին մէջ եւ իրենք անյիշատակ մնացին երեկի միջատներուն պէս : Կ'ուզէք դուք այդպէս ապրիլ եւ մեռնիլ : Բանի մը համար ապրեցէք : Բարիք ըրէք եւ ձեր հետեւը թողէք առաքինութեան յիշատակարան մը զոր ժամանակի փոթորիկները չկրնան կործանել : Ազնուութեան, սիրոյ եւ ողորմութեան գործերով ու խօսքերով ձեր անունը գրեցէք սրտերուն վրայ այն հազարաւորներուն, որոնց հետ առնչութեան կը մտնէք տարուէ տարի : Այն ատեն բնաւ չէք մոռցուիր : Ոչ, ձեր մահէն ետքը ձեր անունը, ձեր գործերը, կ'ապրին եւ կ'փայլին ձեզ ճանչցողներուն սրտին եւ յիշողութեան մէջ ինչպէս աստղերը կը շողան երկնից կայտախի մէջ : Բարի գործերն երկրի վրայ աստղերու պէս կը փայլին :

ՎՇՏԱԿՅՈՒԹԻՒՆ

Ժամեր կան երբ քրիստոնէական անկեղծ կարեկցութեան չորս խօսք եւ ջերմ ու սիրալիք սրտի մը արտահոսումը այս լայնարձակ աշխարհին մէջ գտնուած ունէ բանէ աւելի օգուտ կ'ընեն : Երբ նեղութիւններէ պաշարուած եւ ընկճուած ենք՝ գեղեցիկ խօսքերու պէտք չունինք, այլ մեր սրտին հետ բաբախող սրտի մը եւ մեր արցունքներուն հետ խառնուող արցունքներու : Ընդհանրապէս լաւագոյն քրիստոնէականութեան կարեկցութիւնը պէտք եղածէն աւելի խօսքով եւ պէտք եղածէն պակաս արցունքով կ'արտայայտուի :

Պատիկ աղջիկ մը որուն մայրը նոր մեռած էր՝ ըսաւ թէ իր լաւագոյն մխիթարութիւնն ընդունած էր դպրոցական ուրիշ աղջիկէ մը : «Ինչ կ'ըսէր քեզի,» հարցուցին անոր : «Բան մը չէր ըսեր,» պատասխանեց աղջիկը, «բայց երբ ես սաստիկ կը տխրէի եւ գրուս գրքիս մէկ երեսին վրայ կը կախէի եւ կուլայի, ան ալ իր գրուսը միւս երեսին վրայ կը կախէր ու կուլար ինծի հետ :»

Երբ տեսնենք մէկը որ իր գրուսը գիրքին մէկ երեսին վրայ կը կախէ եւ կուլայ, մենք ալ մեր գրուսը միւս երեսին վրայ կախենք ու անոր հետ լանք : Վշտակցութեան ճամբիտ կերպն այս է :

ԱՌԱՋԻՆ ԱՌԻԹՈՂ

Երիտասարդ մը նոր մտած էր եկեղեցի : Ի սկզբան կրօնական եռանդով կը վառէր եւ

նախանձաւոր էր որոշ եւ կարեւոր բան մը ընելու ինքզինք քրիստոնէայ անունին արժանի ցուցնելու համար : Եկեղեցին գիւղի եկեղեցի էր հին եւ պահպանողական : Անոր մէջ քիչ դեռահասներ կը գտնուէին, եւ չէր թուեր թէ ունէ պատեհութիւն կար գործնական հանապազօրեայ քրիստոնէական գործի :

Ժողովրդին մէջ գինեմոլ մը կար : Ինչպէս առ հասարակ կ'ըսուէր, նա նորոգուած եւ փոխուած մէկն եղած էր : Լըջութեամբ կը մտածէր միտնալ եկեղեցիին հետ երբ իր փորձութիւնը վերջ գտնէր : Օր մը փորձութիւնը զօրաւոր կերպով վրան յարձակեցաւ, եւ ինք յաղթուեցաւ իր խմտուքի հին թխրժակէն : Շաբաթի մը չափ անոր ստորնացուցիչ ազդեցութեանց ներքեւ մնաց : Այնուհետեւ մեծապէս խռոված՝ գնաց բարեկամի մը եւ ըսաւ, «Ինչ ընելու եմ :» «Ինչ ընելու» ըսաւ միւսը : Միայն մէկ բան կայ ընելու : Աղօթքի ժողովին գնա : Նստէ քու սեփական տեղդ : Ոտք ելիր սովորական ատենին եւ ամբողջովին պատմէ ջու վրայովդ : Խնդրէ Աստուծոյ եւ ժողովրդին ներողութիւնը : Այսպէս ըրէ, եթէ կը ցաւիս վիճակիդ վրայ : Եթէ չես ցաւիր, մի ընե՛ր :»

Խնդճ մարդը գնաց եւ իրեն ըսուածին պէս ըրաւ : Դողդալով պատմեց իր փորձութեան եւ ինչալուս վրայով : Արցունքներով ըրաւ իր խոստովանութիւնը, եւ խնդրեց որ Աստուծոյ ժողովուրդը աղօթք ընէ իրեն համար որպէս զի Աստուած օգնէ իրեն եւ ինք այլ եւս երբեք նորէն չյաղթուի փորձութեանէ : Բայց իրեն քաջալերական խօսք մը չկրցուեցաւ, ոչ ալ աղօթք մը մատուցուեցաւ իրեն համար ներկայ գտնուողներէն մէկուն կողմանէ :

Ժողովը աւարտեցաւ : Ժողովուրդը եկեղեցիէն դուրս ելած ատեն իր քովէն կ'անցնէր : Անոնցմէ ոչ մէկը մօտեցաւ իրեն : Անհաւատալի կերեւի այս, բայց իրողութիւնն է, երեւակալութիւն չէ : Անոնք որ ուխտած էին մխիթարել ապաշխարողները եւ օգնել ինկածներուն, դուրս ելան եւ թողուցին իրենց մոլորած եղբայրը որ Աստուծոյ տանը մէջ կայնի մինակ, ամչցած եւ ակնկոր :

«Չկրնար ճշմարիտ ըլլալ, կեղծաւորութիւն է ըրածը,» կ'ըսէին իրարու, իրեն ջատագովութիւն իրենց ըրած զանցառութեան : «Ասանկներուն երես տալու չէ, ասոնք նախատինք են ժողովրդին,» ըսաւ ուրիշ մը :

Վերոյիշեալ երիտասարդն ալ անցաւ անոր քովէն միւսներուն նման : Կարեկցութեան զգացումէ քիչ մը շարժեցաւ սիրտը : Դիտեց այն ամչցած եւ խոնարած մարդուն կերպարանքը երբ եկեղեցիէն դուրս կ'ելլէր գրուսը ծռած : Անոր այս երեւոյթը վրդովեց զինքը : Տուն գնաց, բայց չկրցաւ կենալ հոն : Նորէն դուրս ելաւ եւ ազդին անդին կը թափառէր, վերջապէս իր ներքին տաղնապը արեւցողին տունը առաջնորդեց զինքը :

Հաղիւ համարձակեցաւ դուռը զարնել : Տաքութիւն եւ պաղութիւն կու գար վրան, եւ չէր գիտեր թէ ինչ ընելու էր : Վերջը իրեն այնպէս եկաւ թէ կրն մը կուլար ներսը : Ուստի իր բոլոր քաջութիւնը ժողովրդով զարկաւ դրան զանգակը, բայց յետոյ «Երանի թէ հազար մղոն հեռուն գտնուէի» ըսաւ ինքնիրեն : Կեանքին մէջ երբեք խօսած չունէր այդ մարդուն հետ, եւ կը վախ



նար թէ մարդը յանդգնութիւն պիտի սեպէր ըրածը: Մարդուն կինը առջեւն ելաւ լալով: «Ո՛հ, օգնեցէք ինձի», ըսաւ, «քեզ Աստուած զրկեց, կարելի է կրնաք բան մը ընել, ձոն տնէն կը հեռանայ կոր: Իր ծրարները կը պատրաստէ. դուրս կ'երթայ, կը թողու զիս եւ իր զաւկները. ա՛յ ետ պիտի չդառնայ: Կ'ըսէ թէ երբեք նորէն ոտք պիտի չկոխէ այս քաղաքը: Շատ ամչցած է իր ըրածին համար, եւ զայրացած է իրեն ցուցուած վարմունքին համար: Երբեք չկրնար նորէն շիտակ բռնել իր դուռը: Ո՛հ, չէ՞ք կրնար խօսիլ հետը եւ արգելել զանիկա երթալէ:»

Երիտասարդը մոռցաւ իր երկչոտութիւնը: «Պիտի ջանամ», ըսաւ: Սենեակ մտաւ վհատեալ ապաշխարողին քով, եւ զոցեց դուռը: Աղաչանքներուն յետոյ աղօթքին ձայները կնոջ անձկոտ ականջներուն կը հասնէին պատին ետեւէն: Ժամ մը ետքը այցելուն դուրս եկաւ: Ետեւէն կու գար մարդը գլուխը շիտակ բռնած:

«Է՛հ, ձէնի», ըսաւ կնոջը, «այս տեղ բարեկամ մը ունիմ եղբր, որչափ ատեն որ ինք կենայ, ես ալ պիտի կենամ:»

Յոյսը եւ հաստատամտութիւնը արծարծեցան: Մնայուն բարեկարգութեան ուրիշ ձեռնարկի մը ժամանակն էր հիմա: Նորատի քրիստոնէին անանձնատիրութիւնը, ընելով ինչ որ ուրիշները չէին ըրած, ի կատար հասուցած էր գործը: Մարդը իր ընտանիքին վերադարձաւ: Անոր հոգին զօրացած էր չարին հետ մաքառելով:

Եթէ իւրաքանչիւր քրիստոնեայ այսպիսի նուիրական գործ կատարէր, մեծ պատիւ պիտի բերէր Քրիստոնէութեան, եւ պիտի փութացնէր Քրիստոսի տիեզերական իշխանութիւնը մարդոց սիրտերուն եւ կեանքերուն մէջ:

**ՉԻ ՄԸ ՔՈՆԿՈՅԻ ՎՐԱՅ**

Դժուար է մտածել ժողովուրդ մը որ ընտանի եղած ըլլայ շողքնաւու մը երեւոյթիւն, բայց երբեք չգիտնայ թէ ձի կայ: Այսպիսի ժողովուրդ մըն էին մինչեւ մօտերս այն սեւամորթները որոնք կը բնակին Քոնկօ գետին սահմաններուն մէջ, ուր երբեմն երբեմն շողքնաւներ կու գային, բայց ձի երբեք եկած չէր:

Շատ չընեմ, Պելճիացի մը, որ Քոնկոյի վրայ Մուշի կոչուած տեղը այցելեց, իր հետ շողքնաւով բերաւ ընտիր ձի մը: Հազիւ թէ շողքնաւը իր բռնները ցամաք հասած էր, ահա տեղւոյն բոլոր սեւերը հաւաքուեցան եւ աչքերնին տնկած հիացմամբ նայեցան կենդանիին վրայ: Անոնցմէ մէկը որ քիչ մը ճամբորդութիւն ըրած էր, «Ատիկա ձերմակներուն փիղն է», ըսաւ — թերեւս ոչ գէշ բացատրութիւն մը կեդրոնական Ափրիկեցիի մը համար որ առաջ ձի բնաւ տեսած չէր — բայց սեւերուն ընդհանուր գաղափարը կը թուէր ըլլալ թէ տեսակ մը այժ էր այն, զոր ձերմակը իր հետ բերած էր ուտելու համար, վասն զի ձերմակը նշանաւոր է տարօրինակ ուտեստներ գործածելու մասին:

Բոլոր այս միջոցին ձին կայնած էր գլուխը բնիկներուն բազմութեանը դարձուցած, հանդարտօրէն ձարակելով իրեն տրուած խոտը: Եւ ահա քիչ մը փոխեց զիրքը, մէկ կողմ դարձաւ եւ սկսաւ շարժել իր ազին: Այն ատեն աղաղակ մը փրցուցին բնիկները: Կ'ըսէին թէ ազին կեղծ է, թէ ձերմակ մարդը կցած է զայն ձիին: Չանոնք վստա-

հացնելու համար թէ բանն այդպէս չէր, ձերմակներէն մէկը բռնեց ձիին ազին եւ քաշեց երկու ձեռքերովը ալ: Ասիկա այնքան զուարճացուց սեւերը որ գետնին վրայ կը թաւալէին իրենց խնդուքին սաստկութենէն:

«Հիմա», ըսաւ ձերմակը, «դուք եկէք եւ ինձի պէս ըրէք, ձեզի ալ թող պիտի տայ որ քաշէք իր ազին»: Բայց սեւերը երբեք չէին համոզուեր կենդանիին դաշնու: Եւ իրաւ որ անոնցմէ ոմանք պէտք ունեցան ուրիշներէն բռնուելու որ չփախչէին: այսչափ սաստիկ էր ձիին աղաւթ սարսափը:

Քիչ մը ժամանակ անցնելէն ետքը ցեղապետը, քաջ եւ հարուստ մարդ մը բնիկներուն մէջ, համարձակեցաւ յառաջ քալել, եւ յայտնեց պաշտօնակալին իր յետին աստիճան սքանչացումը ձիին վրայ, եւ իր փափաքը զանիկա գնելու: Հասկցաւ թէ կենդանին ձերմակ մարդուն թանկագին մէկ ստացուածքն ըլլալու էր, եւ ուստի պատրաստ էր բարձր գին մը վճարել: Առաջարկեց անոր փոխարէն չորս այժ տալ ձերմակին: Բայց շատ զարմացաւ երբ տեսաւ որ մերժուեցաւ իր այն առատաձեռն առաջարկը: Այժը արժէքի չափը կամ միութիւնն է Քոնկոյի երկրին այս մասին մէջ: Երբ առաջին անգամ շողքնաւ մը եկաւ Քոնկօ գետը, ցեղապետ մը այն նորօրինակ տեսարանին վրայ իր ապշուածութիւնն հաղիւ անցած՝ նաւապետին գնաց եւ հարցուց թէ քանի՛ այժ կ'ուզէր շողքնաւին համար:

**ԱՐԲԵՑՈՒԹԵԱՆ ՔԱՆԻ ՄԸ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ**

Աշխատութեան վիճակագրութեան վարչութիւնն ի Մասաչուսեց որ օրէնսդրական մարմինն հրահանգներուն համեմատ կը գործէ, ոգելից ըմպելեաց առեւտուրին՝ աղքատութեան, ոճրագործութեան եւ խելագարութեան հետ ունեցած յարաբերութեան մէկ քննութիւնը կատարած է: Որդեգրուած մեթոսին համաձայն ուղղակի կառավարական հաստատութեանց մէջ պատրաստեալներուն վրայ պիտի ըլլար քննութիւնը, եւ մէկ տարուան մէջ կառավարութեան դատարաններուն առջեւ բերուած բոլոր յանցաւորներուն վրայ: Քննութեան արդիւնքը բաւական ստուար հատոր մը կրնայ լեցնել: Իսկ գալով խելագարներուն, որչափ որ կարելի էր ստուգել, տասնէն եօթը արեւցող ծնողաց զաւակ էին, եւ չորսէն մէկը խելագար եղած էր բուն իր արեւցութեան պատճառաւ: Կառավարութեան բանտերուն մէջ գտնուող բոլոր աղքատներուն չորսէն երեքը ոգելից ըմպելիներու մօլի էին, եւ գրեթէ կէսը՝ արեւցող ծնողներու զաւակներ:

Այդ տարուան մէջ իբրեւ ոճրագործ ձերմակալուածներուն երկու երրորդին յանցանքին պատճառն էր արեւցութիւնը: Ամէն տեսակ ոճիրներուն տասնէն իբր ութուկէսը արեւցութեան հետեւանք էին: Եւ անչափահասները դուրս ձգելով՝ ոճիրներու համար ձերմակալուածներուն հարիւրին ինըսուներկիցը արեւցութեան մոլիներն եղած էին:

Մասաչուսեց Նահանգին տեղային մէկ օրէնքին համեմատ քաղաքները եւ աւանները տարին անգամ մը քուէարկութիւն կը կատարեն զինեւտուներ բանալու արտօնութիւն տալու կամ չտալու համար: Սոյն գործը կատարելու պաշտօնն ունեցող

վարչութեան մէկ ճիւղը քննութիւններ ըրած էր ստուգելու համար թէ ո՛րչափ արեւցողներ կը գտնուէին այն տեղերուն մէջ ուր զինեւտուները փակուած էին եւ ո՛րչափ ուր փակուած չէին: Այն քաղաքներուն եւ աւաններուն մէջ ուր զինեւտու բանալն արգելուած է, արեւցութեան յանցանքով ձերմակալուածները, բնակչաց հազարին վրայ հաշուելով, զինեւտու բանալու արտօնութիւն ունեցող քաղաքներուն մէջ միեւնոյն յանցանքով ձերմակալուածներուն իբր միայն մէկ չորրորդը, եւ արեւցութեան գատ ուրիշ յանցանքներով ձերմակալուածներուն կէսէն պակաս էին: Հինգ քաղաքներ տարուան մէջ մասին մէջ զինեւտու բանալու արտօնեալ են եւ մէկ մասին մէջ արտօնեալ չեն: Տարուան այն մասին մէջ երբ զինեւտու բանալու արտօնեալ են, միջին հաշուով գրեթէ երեքպատիկ ձերմակալութիւններ եղած էին բաղադրամամբ այն մասին հետ երբ արտօնեալ չեն:

Այս վիճակագրութիւնը, ընդհանուր առմամբ, կը թուի թէ կը հաստատէ ոչ միայն սերտ կապակցութիւնը ոգելից ըմպելիներու առեւտուրին եւ ոճիրներու, աղքատութեան եւ խելագարութեան մէջտեղ, այլ նաեւ կը հաստատէ թէ բաւական կը նուազին այս չարիքները երբ զինեւտուները փակ կը պահուին:

**ՀԻՒՄԱԽՏԻ ՎԱՐԱԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐ**

Միացեալ Նահանգաց մէջ փոքնոց խխտեղէ յառաջ եկած մահերուն երբեմն մինչեւ իբր մէկ չորրորդը թողնուած մէջ գոյացած ուսուցչներու արդիւնք են: Ուր որ քաղաքակիրթ հասարակութիւններ կը գտնուին, եւ մարդիկ երկար ժամանակ միեւնոյն տեղը գամուած կը մնան, հոն մուտ կը գտնեն այս հիւանդութիւնը յառաջ բերող մանրածէներ: Գնտախտը, ինչպէս կը կոչուի յիշեալ հիւանդութիւնը, առանին հիւանդութիւն մըն է շատ հասարակութիւններու մէջ, եւ հաղարուոր ընտանիքներ անով խխտացած անդամներ ունին, որոնք կը վտանգեն ընտանեաց միւս անդամներուն առողջութիւնը: Շատ հազուադէպ բան է որ մանուկ մը գնտախտաւոր ծնանի, մինչեւ իսկ եթէ ծնողները նոյն խխտով վարակուած ըլլան, թէպէտ շատ մանուկներ աշխարհ կու գան անկէ բռնուելու զօրաւոր ընդունակութիւնով, այսինքն թէ անոնք աղէկ չեն դիմադրեր ախտին, եւ երբ վարակուելու դիրքին մէջ կը գտնուին, դիւրաւ մը կը վարակուին: Այսպիսի մանուկներ շատ արագութեամբ վարակուելու ենթակայ են իրենց կեանքին առաջին տարուան մէջ, եւ մահաւանդ երկրորդ, երրորդ եւ չորրորդ տարիներուն մէջ: Երբ կը սկսին տախտակամածին վրայ խաղալ, գրեթէ չարունակ փոշիով բռնուաւորուած օդի մէջ կը գտնուին: Տղեկը բնապէս ամէն բան բերանը կը տանի. եւ երբ ձեռքէն կը ձգէ իր խաղալիկները կամ ձեռքը գտնուած ոեւէ բան մը, գետնէն կը վերցնէ եւ բերանը կը դնէ այդ բոլորովին փոշոտած բանը: Եթէ փոշին լեցուն ըլլայ չորացած եւ փխրուած գնտախտային լորձուներով, ինչպէս հաւանական է որ ըլլայ անփոյթ հիւստախտաւորին տանը մէջ, փոքրիկը կը կլլէ թոյնը, եւ նախապէս ընդունակ ըլլալով ախտին, դիւրաւ մը կը վարակուի անով: Գնտախտին մանրածէն չորնալէն ետքը ամիսներով կը պահէ իր կենդանութիւնը, եւ պատրաստ է անե-



լու բարգաւաճելու երբ որ գտնէ յարմար արտ մը : Գնտախտային մանրածնին բարեբաղդապէս չաճիր մարդոց կամ անասուններու մարմիններէն դուրս : Եւ երբ արեւու լոյսին կամ խոնաւութեան կ'ենթարկուի, իր վարակիչ յատկութիւնները կը կորսնցնէ շուտով : Եւ սակայն եթէ չոր պահուի եւ մութի մէջ, ոչ տաքութիւնը եւ ոչ ցուրտը կը թուին թէ կ'ազդեն անոր կենդանութեան վրայ :

Մինչ այս մանրածնին միշտ ազդու է յիշեալ ախտին, կան ինչ ինչ պատճառներ որոնք անոր նախապատրաստ կ'ընեն, կամ կը յարմարցնեն մարմինը որուն մէջ աճի մանրածնին : Ինչ որ սնունդը փոխելու յատկութիւնն ունի, այնպէս կը տկարացնէ մարմինը կազմութիւնը, որ թոքերուն եւ ուրիշ գործարաններուն զեղծերը (պէշ) շուտով նշաւակ կ'ըլլան հիւանդութեան յարձակմանը : Շատ անգամ հիւժախտէ եւ ուրիշ գնտախտային հիւանդութիւններէ առաջ մարսողական գործարաններու հիւանդութիւն կը պատահի : Հիւանդին ընդհանուր առողջութիւնը կը խանգարի, վասն զի մարսողական գործարանները անթերի չեն կատարել իրենց գործը, մարմինը բոլոր բջիջները եւ հիւսկէները կը տկարանան, եւ անկարող կ'ըլլան կորսնցնել հիւանդութեան մանրածնին որոնք կրնան մուտ գտնել մարմինն մէջ : Եթէ կազմութիւնը քաջառողջ է, այս մանրածնինը շուտով կը չքանան, բայց եթէ հիւանդութեամբ տկարացած է, մանրածնինը կ'աճի եւ կը բազմապատկի, մինչեւ որ ժամանակ ետքը մարմինը կը կորսուի : Բոլոր երկարժամանակեայ եւ հինգած ախտերը, որպիսի են սրտի դժնակներու ախտը, երկվամանց Պրայթեան ախտը, լեարդի հիւանդութիւնը, եւ մարսողական գործարաններու տկարութիւնները գնտախտային հիւանդութեան նախապատրաստող պատճառներ են : Անժուժկալութիւնն եւս թէ՛ ուտելու թէ՛ ոգելից ըմպելիներ գործածելու մէջ, շատ գործօն միջոց մըն է այս հիւանդութեան տանող պայմաններ պատրաստելու : Մեծ քաղաքներու ստորին դասակարգի պատկանող ընակիչներուն մէջ, ուր կը տիրեն արեցնութիւն, անառակութիւն եւ նման մոլութիւններ, թոքախտը շատ հասարակ հիւանդութիւն մըն է : Իսկ աղքատութիւնը եւ չքաւորութիւնը նպաստաւորաբար պայմաններ են վարակումը ծաւալելու : Չափազանց ախտառութիւն, անքնութիւն, նստողական գործեր, ապրիլ եւ գործել ոչ չաճող խանութներու, գործատեղիներու եւ վաճառատուններու մէջ, ուր հիւժախտաւոր սերունդներ յաջորդաբար ախտառած եւ թքած են տախտակամածներուն վրայ, եւ շէնքերը բոլորովին վարակուած են զընտախտային մանրածնիներով, բոլորն ալ յիշեալ ախտին որս պատրաստող պարագաներ են : Եկեղեցիներ, թատրոններու շէնքեր, բանախօսութեան սրահներ եւ ակումբներու սենեակներ որոնք շատ տարիներ գործածուած են, եւ արեւու լոյսէ զուրկ մնացած եւ քիչ անգամ պատշաճապէս հոգահրուած, առաջին կարգի թաքստոցներ կ'ըլլան գնտախտի եւ ուրիշ հիւանդութեանց մանրածնիներու : Բայց մինչ բոլոր այս պայմանները կը նախապատրաստեն գնտախտի, ախտը չկրնար իսկապէս գոյութիւն ունենալ առանց զայն յառաջ բերող մանրածնին : Ախտին զիմազրելու կարողութիւնը մարմինն մէջ մի հիւսկէներն եւ գործարանին ան-

աղարտ եւ քաջառողջ ըլլալուն համեմատ կ'ըլլայ : վասն որոյ, ամէն ինչ որ կը կորսնցնէ եւ կը պակսեցնէ օդին, ուտեստին եւ ըմպելիքին մէջի մանրածնիներուն թիւը, եւ ամէն ինչ որ կը նպաստէ ընդհանուր քաջառողջութեան, հուսկ ուրեմն պիտի օգնեն վտարել այն մեծ պատուհասը, հիւժախտը :

ԱՌԱՆՅ ԵՐԿԱՌՈՒՂԻՈՅ ԿԱՌԱՍՈՒՄԲԵՐ

Մօտերս գոհացուցիչ փորձեր կատարուել են Փարիզի արուարձաններուն մէջ կառախուճի մը վրայ զոր շոգեկառք մը կը քաշէր ոչ թէ երկաթուղու գծի՝ այլ հասարակ ճամբու վրայէ : Գործածուած կառախուճիքը առ այժմ միայն երկու կառքերէ կը բաղկանայ, որոնց մին կը պարունակէ վայրաշարժին մեքենաները եւ տասնընչորս ճամբորդներու նստարաններ, իսկ միւս կառքը կը պարունակէ քսանընչորս նստարաններ : Մեքենան 16 ձիու ոյժ ունի եւ միջին սրընթացութիւնն է ժամը իրը եօթը մղոն : Կառախուճիքը կարող է դառնալ 23 ոտք տրամազածով շրջանակի մը մէջ անգամ : Ուրիշ կառախուճիք եւս շինուած է բեռան համար : Հնարիչները կը յուսան թէ այս տեսակ կառախուճիքը շատ պիտի գործածուին քաղաքներու մէջ եւ մերձակայնները :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՔԱՐՈՁԻՉԻՆ ԸՆԿԵՐԸ

Ո՛վ է քարոզիչին ընկերը, Ընթերցողը, եթէ Աւետարանի պաշտօնեայ է, անմիջապէս պիտի յիշէ թէ իր ընկերը սարկաւազ մ'է կամ հոգեւոր եղբայր մը : Ոմանք եւս պիտի պատասխանեն թէ անոր ընկերը իր եկեղեցին է : Բայց ես պիտի ըսէի թէ քարոզիչին ընկերն էր Կէնն Է : Մովսէս Վարմար օգնական» կը կոչէ զկին, եւ արդարեւ սակէ աւելի պատուաւոր անուն մը չէր կրնար տալ անոր՝ այն դարերուն մէջ յորս կինը գրեթէ ամենայնիւ զրկեալ էր յիրաւանց : Բայց եթէ այսօր, այս լուսաւորեալ ժամանակին մէջ, յորում կինն մեծ պատիւներու կ'արժանանայ, գրեւոր ըլլար Մովսէս Մանդոց երկրորդ զուրկը, կը կարծեմ թէ աւելի յարմար պիտի սեպէր «ընկեր» կոչել զայն քան թէ «օգնական» : Ընկեր մը օգնականն մ'աւելի է : Վերջինը միայն լրացուցիչ է : Կ'օգնէ մասամբ : Իսկ առաջինը կը կիսէ բեռն եւ ծանրութիւնը : շատ անգամ աւելին եւս կը կրէ : Եթէ կին մը համարի ինքզինքը միայն օգնական իր առն, չկրնար անոր սրտին յատակն իջնել եւ հոն մեղմել անոր վշտերն ու կրել ցաւերը : Եւ եթէ այր մը կը նկատէ զիւր կին իբրեւ սոսկ օգնական, չկրնար իւր սիրտն անոր սրտին մէջ թափել եւ հոն սփոփանք ու կազդուրում գտնել : Բայց եթէ կին մը համարի ինքզինքն իբրեւ ընկեր իւր առն, պիտի զգայ ինչ որ նա կը զգայ եւ հաճութեամբ պատրաստ պիտի լինի կրել, եթէ միայն թոյլ տայ այրը, անոր ամէն ծանրութիւններն : Եւ եթէ այրը նկատէ զիւր կին իբրեւ ընկեր, խոռովեալ գլուխն վստահաբար պիտի դնէ անոր անձնուէր սրտին վրայ եւ հոն գտնէ կազդուրում եւ հանգիստ : Կնոջ բարձրագոյն կոչումը, իւր առն վերաբերմամբ, «օգնական» ըլլալ չէ, այլ Էնկեր : Ամենէն աւելի կ'ինն արժանի է այս կոչման, եւ ամենէն աւելի պաշտօնէին կ'ինն ստանձնելու է ասոր իրագործումը :

Պաշտօնեայ մը շատ օգնականներ կրնայ գտնել իր ժողովրդեան մէջ, բայց չկրնար

ընկեր մը գտնել : Անոր ընկերը տուեն է, իր քովը : Բայց ամէն կին չկրնար ընկեր ըլլալ, եւ ամէն քարոզիչի կին, դժբաղդաբար, ընկեր չէ : Կանայք իմեզ՝ մնացած են հոն ուր Աստուած դրաւ իրենց նախամայրը Եւան : Կը մնան դեռ իբրեւ «օգնական» : Շատ հազուադէպ են անոնք որոց համար կրնանք ըսել թէ բարձրացած են Եղեմական վիճակէն : Սակայն ոչ մէկ կին մնալու է հիմա այդ նախնական վիճակի մէջ, այլ յաւէտ բարձրանալով մտնելու է յայնմ յորում քրիստոնէական կրօնը եկած է դնել զինքը : Կանայք հիմա կրնան ընկեր ըլլալ, եւ պէտք է որ ըլլան, մանաւանդ Աւետարանի պաշտօնէից կանայք : Ընկեր-կին մ'ուսնեցող պաշտօնեայ մը ոչ թէ մի՛ այլ երկու քարոզիչ է : Եւ ինչ բաղդաւոր է այն եկեղեցին որ մէկ ամսականաւ երկու քարոզիչ ձեռք կը բերէ : Պօղոս առաքեալ կ'ըսէ թէ այրը գլուխն է իւր կնոջ : Բայց այսպիսի կին մը պակ է իւր առն : անոր գլխոյն զարդն եւ փառքն է : Իմ համոզումս այս է, ուրեմն, թէ պաշտօնեայ մը իւր ծանր գործին մէջ ոչ թէ կին կամ օգնական՝ այլ ընկեր մ'ունենալու է իւր կողակցին անձին մէջ : Եւ պիտի թելադրէի ընթերցողիս, եթէ ամուսնացած չէ դեռ եւ կը մտադրէ Աւետարանի ծառայութիւնն ստանձնել, ընտրել կենակից մը որուն անչին Էջ ընկեր մը է : Տէրօջ գործը այս տեսակ ամուսնաբանութեամբ պէտք ունի :

Բայց ինչպէս կարելի է ընտրել այսպիսի մէկը, կամ ո՞վ է այն օրիորդը որ կը խոստանայ քարոզիչ-կենակցի մը ընկեր լինիլ յապագային : Ինչպէս կարելի է ճանչնալ զայն՝ ընտրելու համար : Չայս ընել բաւական դժուարին է, վասն զի մեր մէջ օրիորդաց նկարագրերն ուսումնասիրելու առիթք կամ պատենութիւնը շատ նուազ են, եւ վասն զի օրիորդք սովորաբար յառաջ քան զամուսնութիւն չեն ցուցնել ինքզինքնին իրենց ճշմարիտ նկարագրով : Հասարակ խօսք մ'է ի մեզ ըսել, թէ «աղջկունք չեն յայտնել ինքզինքնին ամուսնանալէ առաջ» : Մեր երկրի սովորոյթք չեն թողուր որ աղջիկներ երեւնան այնպէս ինչպէս որ են եւ ինչպէս որ պիտի ըլլան : Անոնք տեսակ մը բարոյական ստիպում ունին խոնարհ, խոհեմ եւ պարկեշտ երեւնալու, երբ ճշմարտապէս անանկ չեն : Յանցանք մ'է այս, բայց վերագրելի է յաւէտ մեր ընկերակալութեան պահանջմանց : Ասոր համար է որ շատ անգամ օրիորդ մը յուսացուածին պէս աղէկ կին մը չըլլար : Երբեմն կին մը իր աղջիկնութեան նկարագրին հակառակ նկարագրի մը ցոյց կու տայ : Ես թուրքիայէ դուրս եւ աւելի քաղաքակիրթ երկրաց մէջ գտնուած չեմ, բայց կը խորհիմ թէ կին ընտրելու մէջ խաբուողներն հոս աւելի շատ են քան ինոսա : Կ'ուզեմ որ սխալած ըլլայի : Այսու հանդերձ բաւական երկարատեւ նկատողութիւն մը եւ լրջամիտ ուսումնասիրութիւն մը հազիւ թէ կրնայ սխալիլ, եւ այս կերպով իրեն համար կենակից մը փնտոողն պիտի չխաբուի իր ընտրութեանը մէջ : «Չենեւրով զարկ կ'նիքդ, քննելով գտիր կնիկդ» : Այսպէս փնտոողու եւ սյսպէս ընտրելու են իրենց կեանքի ընկերներն՝ մանաւանդ անոնք որոնք միտք ունին պաշտօնեայ լինելու : Այս գործին փափաքող երիտասարդ մը մտքին մէջ ունենալու է չափանիշ (standard) մը, որուն վրայ հետեւեալ կարգաւ գրուած ըլլան բնութագրական, փնտոողութեան, խոհեմութեան, քառաբարեկր-ութեան, քեղեցիկութեան եւ հարստութեան : Այսու-



քիկ են գլխաւոր շնորհք եւ բարեմասնութիւնը, ոչք փնտռուելու են օրիորդի մը վրայ, եւ այն՝ այս կարգաւ, եթէ կ'ուզուի որ ընկեր լինի նա իւր առն՝ Ուրիշներ ենթադրեալ են, կամ ասոնց մէջ կը պարունակին: Կարգ մը ընտրելի օրիորդներ զարնուելու են այս չափանիշին, եւ ահա պիտի յայտնուի այն որ ընկեր ըլլալու խոստում կու տայ: Եթէ գտնուի ոք որ այս նշանակեալ վեց բաներն ունի, այնպիսին երկինքէն իջած հրեշտակ է: Եւ հրեշտակէ մ'աւելի յարմար ընկեր կա՞յ, Բիւրիցս եւրանեալ է այսպիսի ընկերոջ մը այրն: Սակայն, չըսեմ անկարելի, խիստ հազուադէպ է այսպիսի կին մը գտնել: Պէտք պիտի ըլլայ, ուրեմն, այդ վեց բաներէն գոմանս ձգել, Բայց ո՞ր կողմէն:

Դիտուած է թէ երիտասարդք սովորաբար յիշեալ բարեմասնութեանց կարգը չըջելով կը փնտռեն եւ կ'ընտրեն իրենց կենակիցները, միայն սա տարբերութեամբ որ ոմանք հարստութիւնը՝ մինչ այլք գեղեցկութիւնը կը նախադասեն: Մեծապէս կը սխալի Աւետարանի ծառայութեանը հպատակող երիտասարդն եթէ կը հետեւի ընտրութեան այս ընդհանուր եղանակին: Այս կերպով, կը համարձակիմ վճռապէս ըսելու թէ, ընկեր մը չպիտի կրնայ գտնել. վասն զի ըստ օրում այս վեց պարզեւններն համանգամայն ունեցող օրիորդ մը գտնել շատ հաւանական չէ, վտանգ կայ որ ընկերի մը անհրաժեշտ եղող հանգամանքներէն ոմանք զանց առնուին, եւ ընտրեալը գուցէ օգնական իսկ չըլլայ: Հոս ներկայացուած չափանիշին, կամ նոյն սկզբամբ պատրաստուած ուրիշ չափանիշի համաձայն ընտրութիւն չընելով շատ քարոզիչներ ոչ ընկեր եւ ոչ օգնական՝ այլ քեւ եւ Խաչ կը գտնեն: Չափանիշը չըջելն, ուրեմն, կրնայ այսպէս վտանգաւոր լինիլ: Վասն որոյ առանց չըջելու զայն՝ պէտք է փնտռել ընկերոջն, որ ատեն զանց առնուելիք պարզեւններն, եթէ հարկ լինի այսպէս ընել, անկարելութիւնը պիտի ըլլան: Եթէ կարելի չեղաւ գտնել մէկը որ վեցն ալ ունենայ, ձգէ վերջինը — հարստութիւնը — եւ ընտրելին թող ըլլայ միայն քրիստոնեայ, անաչէն, խոհեմ, դաստիարակեալ եւ գեղեցիկ: Նա կրնայ ընկեր լինիլ քեզի, Եւ եթէ հատ մ'եւս ձգել հարկ ըլլայ, ձգէ հինգերորդն ալ — գեղեցկութիւնը, թէպէտ շատ դժուար է ձգել զայն: Մնացեալ բարեմասնութեամբ օրիորդ մը ընկեր մը պիտի բերէ քեզ: Պէտք է ըսել թէ գեղեցկութեան դէմ աչքը ամուր գոցելու չէ, զի մի գուցէ ընտրեալը բոլորովին գուրկ ըլլայ անկէ եւ դիմաց համաչափութենէ: Ոմանք կ'ըսեն թէ «աղէկ չէ որ պաշտօնէից կրնան գեղեցիկ ըլլան»: Հոս հաշիւ մը կայ, իրա՛ւ, բայց սա հաշիւն ալ կայ թէ պէտք է որ անոնք ստէպ մարդոց մէջ երեւնան: «Իսկ եթէ —» Ո՛ր, ալ «եթէ» չկայ. քարոզիչ մը ընկեր ըլլալիք անձին համար մնացեալ չորսէն ոեւէ միոյն նկատմամբ աչք գոցելու չէ. չորսն ալ — քրիստոնէութիւն, անաչիւնութիւն, խոհեմութիւն եւ դաստիարակութիւն — բոլորովին հարկաւոր են: Հասարակ մարդ մը կրնայ, եթէ կ'ուզէ, չորրորդն եւս անտես ընել, եւ գո՞ ըլլալ կնիկով մը որ քրիստոնեայ, անաչէն եւ խոհեմ է. բայց քարոզիչ մը այսպէս ընելու չէ: Այս չորս բարեմասնութեամբ ահա օրիորդ մը կու գայ ընկեր լինիլ իւր քարոզիչ առն:

Բայց հարցում մ'ալ ունինք: Այսպիսի

օրիորդ մը կին ըլլալէ ետք՝ ի՞նչպէս պիտի իրագործէ իրեն այն հանգամանքներն որովք ընկեր-կին ըլլալու համար ընտրուեցաւ. կամ ուրիշ խօսքով, ի՞նչպէս պիտի ցոյց տայ թէ ինքն ընկեր է իւր քարոզիչ առն: Շատ կերպերով: Բայց ես կ'ուզեմ յիշել միայն ան բաները որոց համար նա ընտրելի հանդիսանալով աղջիկութենէ կնութեան կեանքը մտաւ իւր առն ընկեր ըլլալու:

Կին մը, ուրեմն, ընկեր պիտի լինի քարոզիչ առն՝ նախ իւր բնականութեամբ: Սակայն ինչպէս որ պաշտօնեայն ժողովրդեան ոեւէ անհատէն տարբերելու է ի մասին քրիստոնէութեան, այնպէս եւ կ'անկարելի որ կինը տարբերի: Նա հասարակ քրիստոնեայ մ'ըլլալու չէ: Անոր համար քրիստոնեայ ըլլալ նշանակելու է յաւէտ կենդանի եւ եռանդուն հոգեւորութիւն: Նա մի կողմանէ պէտք է լինի շատ աղօթասէր եւ Աստուծոյ խօսքին ստէպ ընթերցմամբ սնանող, եւ միւս կողմանէ սրտին մէջ կրելու է ջերմ փափաք վասն փրկութեան անմահ հոգեոց եւ իրականացնելու է զայն հոգեւոր գործերու մէջ: Ո՞րքան պիտի քաջալերուի պաշտօնեայն երբ տեսնէ թէ կինը ստէպ եւ թախանձագին կ'աղօթէ իրեն եւ եկեղեցւոյն համար, եւ ի՞նչպէս պիտի մղուի դէպ ի բուն ջանադրութիւն, երբ գտնէ թէ իր կինը կը գործէ: Այսպիսի կին մը մեծ խնամով Սուրբ Գիրքն ուսանելու պիտի առաջնորդէ իւր այրն, եթէ շատ անգամ կ'առանձնանայ իրեն Աստուծաշունչով: Նա շատ անգամ եւ առանձինն խօսելու է իւր էրկանը հետ անմահ հոգիներու վրայ, արթնութեան վրայ եւ եկեղեցւոյն զարգացմանը վրայ: Եւ երբ պատեհութիւն գտնէ (այսպիսի կին մը անշուշտ կը գտնէ), նետուելու է անէն դուրս ժողովրդեան մէջ, միայնակ կամ առն հետ, եւ ընելու է ինչ որ կրնայ ընել:

Եկեղեցի մը այն ատեն կրնայ յաւէտ զարգանալ, երբ անոր մէջ երկոքին սեռերն իրենց յատուկ գործիչներն ունին: Պաշտօնեայն երկուստեք հոգեւոր գործիչ մ'է, իրա՛ւ. բայց չկրնար, գէթ ի մեզ, կանանց եւ աղջկանց չըջանակներուն մէջ գործել այնքան ազատութեամբ, յարմարութեամբ եւ արդիւնաւորութեամբ՝ որքան կրնայ կին մը գործել: Շատ յարմար է որ անոր կինն ստանձնէ գործին այս բաժինը: Այս բանն ընելու կարող կին մը, եւ ամէն պաշտօնէի կին պէտք է որ կարող լինի, կը կրէ իւր առն ծանրութիւնը: Ընկեր մ'է այն:

Սարբերք (Շարունակելի)

ՀՈԳԵՆՈՒՆՉ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ Ե. ԴԱՐՈՒ

(Եզնիկ կողմացի)  
 Աստուածասէրն այնպէս կը զգուշանայ իւր կամքէն ինչպէս թշնամիէն: Աղէկ է մաքուր խորհրդով քննալ քան պիղծ խորհուրդով աղօթք ընել: Ո՞վ որ գարուն հանգիստ նստի, ձմեռը սովէն ու ցուրտէն պիտի կորսուի: Մարմնասէր կրօնաւորը խողի պէս է որ իւր ծովացած մեղքով կը խեղդուի: Կեղծաւոր կրօնականը Սատանայի պատրուակն է, որ Սատանան իւր մէջ կրելով՝ իր անդամներուն զազրութիւնը կը ծածկէ եւ ձեւական երեւոյթներով տեսողները կը խաբէ: Ասոնք են այն «գառնագոգստ գայլերը» որոնց սպառնացաւ Քրիստոս անհաւատներուն հետ դասել զանոնք: Մեր բերանները պահք պահելէն հոտե-

ցան, եւ մեր լեզուները սաղմոս ըսելով թմբած են: Բայց ինչ որ Աստուած կը պահանջէ՝ չունինք, այսինքն՝ սէր եւ խոնարհութիւն: Ուստի չըթուանքով միայն կը սիրենք զԱստուած եւ պարապ տեղ կը յոգնինք:

Անասուններուն միտը չեն ուտեր, ու եղբայրն անյազաբար կ'ուտեն: Գինի չեն խմեր, բայց հողին արիւնով կը շաղախեն: Ամուսնացեալները կ'ատեն եւ պիղծ խորհուրդներով միշտ կը պոռնկին: Ոչինչ զգեստներ կը հագնին եւ ազահութիւնով կը բորբոքուին: Այնպիսիներէն պէտք է փախչիլ եւ հաղորդակցութիւն չունենալ անոնց հետ: Երիտասարդ կրօնաւորին քո ծածուկ մեղքերդ մի պատմեր, ինչու որ այն մահ է իրեն համար:

Գինին մեղքերու տեսակները կ'արթնցունէ եւ աստուածային երկիւղը կը հալածէ: Մի ցաւցներ մէկը եւ մի ցաւեր մէկէ մը: Յանցաւոր աշակերտին վրայ մի բարկանար, ինչու որ հիւանդ մը իւր կամքով չի հիւանդանար:

Դո՞ սրտով աշխատութիւնն առանց վարձքի չի մնար: Պճնասէր կրօնաւորը Սատանայի հիւրընկալն է:

Եթէ Աստուծոյ համար կը հալածուիս, քէն մի պահեր:

Երբոր կ'աղօթես, նախ ընտրէ խորհուրդներդ եւ ապա աղօթէ:

Դեւերը հարստութիւն գիղելու ատեն կը հաւաքուին, իսկ հրեշտակները՝ զայն բաշխելու ատեն:

Ընչասիրութիւնը զուգընթաց է կուսպաշտութեան հետ:

Եղբայրասէր կրօնաւորը Քրիստոսի հետ ազգակցութիւն ունի:

Սաղաղասէր կրօնաւորը եղբայրութեան պայծառ ջահն է:

Ո՞վ որ իւր եղբոր դէմ ոխ ունի, Սատանային դաշնակից է: Ո՞վ որ քէն պահելով կը քնանայ, զԱստուած կը բարկացնէ:

Իրիկուն երբ մահիճը կ'երթաս, այնպէս սեպէ թէ գերեզման կ'իջնես:

Ո՞վ որ եղբայրը մարմնաւոր կերակուրէն կը զրկէ, Քրիստոսի սեղանին ճշմարիտ ցանկացող չէ:

Եթէ քեզմէ ուզողին տաս, Աստուծմէ շնորհակալ եղիր, զի այն կերպով դու անկէ աւելի շահեցար:

Քո մարմինդ նեղէ Սուրբ Գրոց վկայութեանց զիտութիւնով:

Կան առաքինութիւններ որ Աստուծոյ հաճելի չեն, որոնք շարին խաբէութիւնն են: Երբ կ'աղօթես, գիտցիր թէ որո՛ւ հետ կը խօսիս, կամ երբ բան մը կը խնդրես, քո խորհուրդներդ քո մէջ ամփոփէ:

Եթէ հիւանդ կամ յոգնած ես, իշխանութիւնով մի՛ վարուիր:

Այս կեանքը պատերազմ է: (Դեռ ո՛ր էր Լոնկֆելօ)

Աղէկ է աղօթքի ատեն ձեռներն առ Աստուած տարածել. բայց աւելի կարեւոր է որ անոնք եղբայրներու պէտքին ծառայեն:

Անգործ մեղուն ժիր պիծակէն լաւ է:

Եթէ բոլոր եղբայր ցաւերը քեզ չեն աղդեր, առաջնորդ մի՛ լինիր:

Եթէ անարժանը պէտք եղածին պէս չե՞ս յանդիմաներ, վարդապետ մի՛ լինիր:

(Թարգ.)

Վան Ե. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ.



ՀԱՆԴԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մարտ 1 ըստ Յուլի, եւ Մարտ 13 ըստ Լուս. 1897

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

